ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.02.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) քննելով «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի 09.02.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) 09.02.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՁՔ-ՀՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2018 թվականի հունվարի 31-ի բացման նիստի (շարունակություն) թիվ 3 արձանագրությամբ հաձնաժողովը փաստել է, որ «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան՝ բացառությամբ տուժանքի մասին համաձայնագրի (Հավելված 10) ներկայացման վայրը նշված է գ. Արգել, այնինչ հրավերով սահմանված է եղել ք. Չարենցավան:

Վերը շարադրվածը հիմք ընդունելով և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով (Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են), ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով (հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան), մերժել է հայտը:

«ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի գնային առաջարկը հայտը բավարարված մասնակցի գնային առաջարկից նվազ է 488,250 ՀՀ դրամով:

09.02.2018 թվականի ժամը 12:00-ի դրությամբ պայմանագրի կնքման մասին որոշումը տեղեկագրում չի հրապարակվել և «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ին չի ծանուցվել:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Հանձնաժողովն արձանագրության մեջ նշել է, որ «...համաձայնագրի (Հավելված 10), ներկայացման վայրը նշված է գ. Արգել, այնինչ հրավերով սահմանված է եղել ք. Չարենցավան:»:

Ոչ հրավերում, ոչ ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան հրամանում, ոչ գնումների մասին օրենսդրությունը կարգավորող այլ իրավական ակտերում սահմանված չէ, որ տուժանքի մասին համաձայնագրի վերևի ձախ անկյունում լրացվող վայրը համաձայնագրի ներկայացման վայրն է: Ավելին՝ այս փաստաթղթի օրինակելի ձևն ուսումնասիրելիս, որը հաստատվել է ՀՀ ֆինանսների նախարարի համապատասխան հրամանով, պարզ է դառնում, որ այն ոչ թե ներկայացման վայրն է, այլ այն վայրը, որտեղ գրանցված է մասնակիցը և ստորագրվել է համաձայնագիրը, քանի որ համաձայնագիրը միակողմանի փաստաթուղթ է, այն ստորագրվում և կնքվում է բացառապես մասնակցի կողմից, հետևաբար այնտեղ այլ հասցե, քան իրավաբանական անձի գրանցման վայրը և փաստաթղթի ստորագրման վայրը չի կարող լինել:

Եթե պատվիրատուի կարծիքով տուժանքի մասին համաձայնագրի վերևի ձախ անկյունում լրացվող վայրը համաձայնագրի ներկայացման վայրն է, հանձնաժողովը «ք. Չարենցավան» բառերի փոխարեն «գ. Արգել» բառերը, գտնում ենք, պետք է դիտարկեր որպես անհամապատասխանություն, քանի որ հայտում չի բացակայել գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված

չեն եղել հրավերի պահանջներին անհամապատասխան: Ուստի այս դեպքում հանձնաժողովը, գտնում ենք պետք է առաջնորդվեր ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման 1-ին հավելվածի 41-րդ կետի պահանջով, համաձայն որի՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենսդրությամբ և հրավերով ներկայացման վայրի հետ կապված միակ պահանջը վերաբերում է հայտի ծրարին, որի վրա պետք է նշվի ներկայացման վայրը, ինչը մեր կողմից հստակ պահպանվել է:

Ընկերությունը Խորհրդին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Անվավեր ճանաչել հանձնաժողովի կայացրած որոշումը՝ «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու մասով,

2. Պարտավորեցնել հանձնաժողովին «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար՝ հետագայում կատարելով նշված որոշումից բխող այլ գործողությունները:

Խորհրդի նիստին մասնակցում էր «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչ Խաչատուր Խաչատրյանին:

2. <u>Չարենցավան համայնքի «Հրաշք» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Չարենցավան համայնքի «Հրաշք» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.02.2018թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Չարենցավան համայնքի «Հրաշք» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը կազմակերպել է ՁՔ-ՀՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգ՝ սննդամթերքի գնման նպատակով:

2018 թվականի հունվարի 18-ին ժամը 17:00-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովի կողմից հաստատվել է վերոնշյալ ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարության և հրավերի տեքստերը:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք), ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ), այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան ՁՔ-ՀՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի հայտարարությունը և հրավերը հրապարակվել է www.procurement.am հասցեով ինտերնետային կայքում, որի արդիականության ժամկետ է սահմանվել 2018.01.18-ից մինչև 2018.01.25-ը ժամը 17:00-ն:

Հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2018 թվականի հունվարի 25-ին ժամը 17:00-ին: Վերոհիշյալ գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել թվով 4 (չորս) մասնակից:

2018 թվականի հունվարի 31-ին ժամը 16:00-ին (հայտերի բացման նիստի շարունակություն) կայացած նիստում Ա/Ձ Ալբերտ Տեր-Գալստյանի, Ա/Ձ Գայանե Մելքոնյանի կողմից ներկայացված հայտերը գնահատվել է բավարար, սակայն «ՄԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի, «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են եղել հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են եղել հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ՝ Տուժանքի մասին համաձայնագրի (Հավելված 10)՝ ներկայացման վայրը համապատասխանաբար նշված է եղել ք. Երևան, գ. Արգել, այնինչ հրավերով սահմանված է եղել ք. Չարենցավան:

Գնահատող հանձնաժողովը՝ ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի (հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են), Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի (հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան) դրույթներով և հիմք ընդունելով ՁՔ-ՀՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերի I ՄԱՍ-ի 8.2 կետը (հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը,

հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և/կամ հայտի ապահովումը կամ դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան)՝ որոշել է «ՄԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՍՊԸ-ի, «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան առաջին տեղ զբաղեցրած մասնակիցները ներկայացրել են հրավերով նախատեսված փաստաթղթերը: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է հարցման մասին համապատասխան եզրակացությունը:

2018 թվականի փետրվարի 9-ին ժամը 16:00-ին (հայտերի գնահատման նիստի արձանագրություն) կայացած նիստում գնահատող հանձնաժողովի որոշմամբ 85-րդ, 86-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Ալբերտ Տեր-Գալստյանը, 1-84 չափաբաժինների մասով՝ Ա/Ձ Գայանե Մելքոնյանը, և սահմանվել է անգործության ժամկետ:

Վերոհիշյալ ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից իրականացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված բոլոր հրապարակումները:»:

Խորհրդի նիստին մասնակցում էր Չարենցավան համայնքի «Հրաշք» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի ներկայացուցիչ Պավել Գաբրիելյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի 09.02.2018թ. ներկայացրած բողոքը, Չարենցավան համայնքի «Հրաշք» մանկապարտեզ ՀՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.02.2017թ. գրությունը և կից փաստաթղթերը, ՁՔ-ՀՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՁՔ-ՀՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 31.01.2018թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունը, Ընկերության կողմից Ընթացակարգին ներկայացված հայտի պատճենը, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը.

Չարենցավան համայնքի «Հրաշք» մանկապարտեզ ՀՈԱԿ-ը սննդամթերքի ձեռքբերման նպատակով հայտարարել է ԱՄՄՔ-2ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ն:

30.01.2018թ. ժամը 16:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.4 կետով Հանձնաժողովը արձանագրել է, որ «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ՝ տուժանքի մասին համաձայնագրի (Հավելված 10) ներկայացման վայրը նշված է գ. Արգել, այնինչ հրավերով սահմանված է ք. Չարենցավան:

Ընկերությունը Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ հայտով ներկայացրել է թիվ 10 հավելվածով նախատեսված հայտի ապահովումը և վճարման պահանջագիրը, որը լրացված է եղել Ընթացակարգի հրավերի պահանջներին և պայմաններին լիովին համապատասխան, սակայն Հանձնաժողովը հայտերի բացման նիստի արդյունքում որոշել է «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի հայտը մերժել այն պատճառաբանությամբ, որ վերջինիս հայտի տուժանքի մասին համաձայնագրի (Հավելված 10) ներկայացման վայրը նշված է գ. Արգել, այնինչ Հրավերի համապատասխան հավելվածում նշված է ք. Չարենցավան:

Բողոքի քննության նպատակով 13.02.2018թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ հայտի ապահովման ներկայացման վայրը Հրավերի հավելված 10-ով նախատեսված մասնակցի կողմից լրացման ենթակա պարտադիր վավրապայման չի հանդիսանում: Վերջինս հավելեց նաև, որ հայտի ներկայացման վայրի հետ կապված միակ պահանջը, որը սահմանված է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ՝ ծրարի վրա նշված մասնակցի գտնվելու վայրի, ինչպես նաև հայտի ներկայացման վայրի (հասցեի) առկայությունն է, ինչը Ընկերության կողմից հստակ պահպանվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 30-րդ հոդվածի 3-րդ կետի կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են մասնակցի անվանումը, գտնվելու վայրը և հեռախոսահամարը:
- 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի

հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

• 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

• 32-րդ կետի 1-ին ենթակետի «դ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտի ապահովում:

• 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

ՀՀ ֆինանսների նախարարի 2017թ. մայիսի 24-ի թիվ 247-Ա հրամանով հաստատված գնանշման հարցման ձևով թղթային եղանակով կազմակերպվող գնումների բազային միավորի հնգապատիկը գերազանցող գնման հրավերի օրինակելի ձևի Հավելված 10-ով նախատեսված տուժանքի մասին համաձայնագրով (հայտի ապահովում) սահմանվել են հետևյալ վավերապայմանները՝ Ընկերության անվանումը, Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որոնք լրացվում են մասնակցի կողմից:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 10-ում՝ տուժանքի մասին համաձայնագրում տուժանքի մասին համաձայնագրի (Հավելված 10) ներկայացման վայրը նշված է «գ. Արգել», սակայն ծրարի վրա առկա են գրառումներ մասնակցի գտնվելու վայրի մասին՝ «Կոտայքի մարզ, գյուղ Արգել, 14 փողոց, 26 շենք», ինչպես նաև հայտի ներկայացման վայրի մասին՝ «ք. Չարենցավան, Կ.Դեմիրճյան հրապարակ, թիվ 1»:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնագրի (Հավելված 10) ներկայացման վայրը նշված է «գ. Արգել», մինչդեռ Հրավերի համապատասխան հավելվածում նշված է եղել ք. Չարենցավան:

Հաշվի առնելով, որ «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված տուժանքի մասին համաձայնագրում Ընկերության հայտի ապահովման ներկայացման վայրի վերաբերյալ նշումն ըստ էության չի կարող արգելք հանդիսանալ շահառուի կողմից հայտի

ապահովման գումարի գանձման համար, ինչպես նաև այն, որ Ընկերության կողմից ներկայացված ծրարի վրա առկա են գրառումներ մասնակցի գտնվելու վայրի, ինչպես նաև հայտի ներկայացման վայրի մասին, Խորհուրդը գտնում է, որ Ընկերության հայտը բովանդակային առումով ամբողջական է:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը՝ Ընկերության կողմից ԱՄՄՔ-2ՄՀՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-18/1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին ներկայացված հայտը վերը նժված անհամապատասխանության հիմնավորմամբ մերժելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի կողմից 09.02.2018թ. Խորհրդին ներկայացված բողոքը բավարարել:

1. Անվավեր ճանաչել հանձնաժողովի կայացրած որոշումը՝ «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու մասով,
2. Պարտավորեցնել Հանձնաժողովին ընդունել «ԱԿՎԱՄԱՐԻՆ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատել մասին համապատասխան որոշում՝ հետագայում կատարելով նշված որոշումից բխող այլ գործողությունները:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**